

Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր Հ Հ Ա Ն Պ Ա Գ-ԾՁԲ-096

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԱՆՎՃԱՐ ԵՎ ԱՐՏՈՆՅԱԼ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ
ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ**

ԵՎ

ԾԱՂԿԱՀՈՎԻՏԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ-Ի
(իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ)

ՄԻՋԵՎ

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմը,

(այսուհետ՝ Պատվիրատու)

որպես բժշկական օգնության և սպասարկման պետական պատվեր տեղադրող, մի կողմից՝ ի դեմս ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի ղեկավար՝ Նելսոն Զուկոյանի, որը գործում է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության հիման վրա և

Ծաղկահովիտի առողջության կենտրոն ՓԲԸ-ն (լիցենզիա*)

(այսուհետ՝ Կատարող)

ի դեմս տնօրեն՝ Ժ/պ Արմեն Հակոբյանի, որը գործում է Ծաղկահովիտի առողջության կենտրոն ՓԲԸ-ի կանոնադրության հիման վրա (միայն իրավաբանական անձանց դեպքում), կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

I. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Պատվիրատուն հանձնարարում, իսկ Կատարողը պարտավորվում է առողջապահական պետական նպատակային ծրագրերի շրջանակներում ցուցաբերել պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում (այսուհետ՝ Բուժօգնություն) օրենսդրությամբ նախատեսված դեպքերում դրա իրավունքը ունեցող անձանց՝ Պատվիրատուի կողմից թույլատրված Բուժօգնության տեսակների գծով, սույն պայմանագրի հավելված 1-ով սահմանված ծառայություններով և գներով, սույն պայմանագրի հավելված 2-ով սահմանված պայմանագրային գումարի շրջանակներում:

II. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Կատարողն իրավունք ունի.

2.1.1. սույն պայմանագրով սահմանված կարգով ստանալ փոխհատուցում սույն պայմանագրի պայմաններին համապատասխան ծավալով և որակով մատուցված Բուժօգնության համար,

2.1.2. անհրաժեշտության դեպքում հիմնավորել Պատվիրատուին ներկայացված Բուժօգնության վերաբերյալ հաշվետվությունների արժանահավատությունը՝ լրացուցիչ փաստաթղթեր ներկայացնելու միջոցով,

2.1.3. հերթագրման ոչ ենթակա դեպքերում Բուժօգնության պայմանագրային ծավալների ամսական համամասնությունների գերակատարման հետևանքով հաշվետու ժամանակահատվածում չներկայացված հաշվետվությունները ներկայացնել Պատվիրատուին փոխհատուցման՝ սույն պայմանագրով հաստատված պայմանագրային գումարի շրջանակներում,

2.1.4. ներկա գտնվել Պատվիրատուի կողմից բժշկական կազմակերպությունում իրականացվող դիտարկումներին, մշտադիտարկումներին, ուսումնասիրություններին, փորձագիտական գործունեությանը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով բողոքարկել Պատվիրատուի գործողությունները,

2.1.5. օգտվել ոլորտը կարգավորող իրավական ակտերով սահմանված այլ իրավունքներից:

2.2. Կատարողը պարտավոր է.

2.2.1. Բուժօգնությունն իրականացնել ոլորտը կարգավորող օրենքներին, որոշումներին և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի (այսուհետ՝ Նախարար) անհատական և նորմատիվ հրամաններին համապատասխան,

2.2.2. յուրաքանչյուր ամսվա համար մինչև այդ ամսվան հաջորդող ամսվա 2-րդ աշխատանքային օրվա աշխատանքային ժամի ավարտը (դեկտեմբեր ամսվա համար մինչև դեկտեմբերի 15-ին հաջորդող 2-րդ աշխատանքային օրվա աշխատանքային ժամի ավարտը) էլեկտրոնային առողջապահության համակարգի միջոցով ամփոփել և ներկայացնել Բուժօգնության շրջանակներում կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվություններ (նախարարի 24.01.2011թ-ի N 63-Ա հրամանով հաստատված «Պետական պատվերի շրջանակներում կատարված աշխատանքներն ըստ բյուջետային ծրագրերի և բժշկական ծառայությունների տեսակների» հաշվետվությունը /2և N HP-011/ և /2և N SC-011/) պայմանագրային գումարի ամսական համամասնությունների ծավալներին համապատասխան՝ սույն պայմանագրի 5-րդ հավելվածով սահմանված չափաքանակների շրջանակներում, հավելված 2-ով նշված ծրագրերին համապատասխան առանձին ընդունման-հանձնման արձանագրություններ և հաշվարկային փաստաթղթեր, ինչպես նաև իր կողմից իրականացվող գործունեության վերաբերյալ նախարարի կողմից և այլ իրավական ակտերով սահմանված հաշվետվություններ, ձևեր և տեղեկանքներ,

* Կ-XX-001102 տրված 13/12/2007թ-ին, Կ-XX-001263 տրված 13/12/2007թ-ին:

2.2.3. ապահովել սույն պայմանագրին կից «Ծառայությունների մատուցման պայմանները» (հավելված 3),

2.2.4. Պատվիրատուի կողմից էլ. առողջապահական համակարգի տվյալների փոխանցումն ապահովող ցանցի (data network) ներդրման դեպքում 14 օրյա ժամկետում միանալ տվյալ ցանցին՝ միևնույն ժամանակ ունենալով էլ. առողջապահական համակարգի տվյալների փոխանցման ցանցը սպասարկող մատակարարից տարբերվող այլ մատակարարի կողմից մատուցվող պահուստային կապուղի՝ ապահովելով 10 օգտատիրոջ հաշվով 2 մբ/վ սիմետրիկ ինտերնետ սնուցում,

2.2.5. ապահովել սույն պայմանագրի շրջանակներում իրականացվող Բուժօգնության մասին տեղեկատվության հրապարակայնությունը, այդ թվում՝ բնակչության համար տեսանելի վայրում տեղադրելով համապատասխան տեղեկատվություն Բուժօգնության տրամադրման հետ կապված հարցերի կամ բողոքների ներկայացման կարգի Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մարտի 4-ի «Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման մասին» թիվ 318-Ն որոշմամբ հաստատված բնակչության սոցիալապես անապահով ու առանձին (հատուկ) խմբերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 1717-Ն որոշմամբ հաստատված բնակչության սոցիալական խմբերի և այն հիվանդությունների ցանկերի, որոնց դեպքում դեղերը հատկացվում են անվճար կամ արտոնյալ պայմաններով, Նախարարի հրամաններով հաստատված «Հիմնական դեղերի ցանկի», հատուկ և դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտությունների ցանկերի և սահմանված արտոնությունների մասին,

2.2.6. պացիենտի հետ կնքել Նախարարի 2011 թվականի փետրվարի 4-ի թիվ 12-Ա և 2011 թվականի փետրվարի 1-ի թիվ 104-Ա հրամաններով հաստատված համավճարային կամ վճարովի հիմունքներով հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման համապատասխան պայմանագիր,

2.2.7. ապահովել պետության կողմից երաշխավորված անվճար Բուժօգնություն ստացող անձանց իրազեկման թերթիկի լրացումը և տրամադրումը պացիենտներին՝ համաձայն Նախարարի 2013 թվականի դեկտեմբերի 18-ի N 3274-Ա հրամանով հաստատված կարգի,

2.2.8. ապահովել գոյացած ֆինանսական միջոցների արդյունավետ և նպատակային օգտագործումը՝ պահպանելով ծախսերի իրականացման հետևյալ առաջնահերթությունները.

2.2.8.1. աշխատավարձ,

2.2.8.2. հարկային պարտավորություններ,

2.2.8.3. դեղերի և բժշկական նշանակության ապրանքների գնում,

2.2.8.4. այլ ծախսեր,

2.2.9. սահմանել աշխատողների աշխատավարձը, այդ թվում՝ ըստ բուժաշխատողների տարբեր կատեգորիաների աշխատավարձի նվազագույն ամսական չափերը, Նախարարի հրամաններով հաստատված՝ աշխատողների աշխատանքի վարձատրության հաշվարկման և վճարման չափորոշիչներին համապատասխան,

2.2.10. ապահովել Պատվիրատուի կողմից սահմանված կարգով և հաստատված ձևերով իրականացվող Բուժօգնության հաշվառումը, գրանցումը, մուտքագրումը էլեկտրոնային առողջապահության համակարգ՝ սահմանված ժամկետներում և տեխնիկական չափանիշներին համապատասխան, ինչպես նաև ապահովել էլեկտրոնային առողջապահության համակարգի սպասարկումը սեփական միջոցներով,

2.2.11. դեպքերի անհատական վարում իրականացնելու նպատակով (case management) Նախարարի կողմից հաստատված ծրագրերի կամ ծառայությունների մասով ապահովել հաճախորդների այցելությունների, բժշկական միջամտությունների, մատուցվող ծառայությունների վերաբերյալ տեղեկատվության մուտքագրումը էլեկտրոնային առողջապահության համակարգ դրանց փաստացի կատարման պահից 1 աշխատանքային օրվա ընթացքում,

2.2.12. ապահովել առնվազն բժիշկների, միջին բուժանձնակազմի, ինչպես նաև էլեկտրոնային առողջապահության համակարգից օգտվող վարչատնտեսական անձնակազմի նույնականացման քարտերի առկայությունը,

2.2.13. ապահովել հետևյալ տվյալների մուտքագրումը էլեկտրոնային առողջապահության համակարգ՝

2.2.13.1. բժշկական և վարչական անձնակազմի անհատական և կոնտակտային տվյալներ,

2.2.13.2. անձնակազմի պաշտոնների և կառուցվածքի վերաբերյալ տվյալներ,

2.2.13.3. բժշկական անձնակազմի աշխատանքային և ոչ աշխատանքային ժամերի վերաբերյալ տվյալներ,

2.2.13.4. բժշկական կազմակերպությունում առկա բժշկական սարքավորումների վերաբերյալ տվյալներ,

2.2.13.5. բժշկական կազմակերպության տվյալները (այդ թվում՝ անվանում, հեռախոս, հասցե, ՀՎՀՀ, պատասխանատուի վերաբերյալ անհատական տվյալներ և այլն),

2.2.13.6. բժշկական կազմակերպության ղեկավարի անհատական և կոնտակտային տվյալները,

2.2.13.7. պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով մատուցվող բոլոր բժշկական ծառայությունների վերաբերյալ տեղեկատվությունը (այդ թվում՝ նաև առանձին դեպքերով չֆինանսավորվող այցերի մասով)՝ համաձայն էլեկտրոնային առողջապահության համակարգում սահմանված ձևի,

- 2.2.13.8. այլ տվյալներ՝ համաձայն էլեկտրոնային առողջապահության համակարգում պահանջվող տվյալներ,
- 2.2.14. ապահովել սույն պայմանագրի 2.2.13. կետում նշված յուրաքանչյուր տվյալի փոփոխության դեպքում մեկ աշխատանքային օրվա ընթացքում դրանց թարմացումը էլեկտրոնային առողջապահության համակարգում,
- 2.2.15. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իր իրավասության սահմաններում ապահովել էլեկտրոնային առողջապահության համակարգից մշակվող տեղեկատվության գաղտնիությունը,
- 2.2.16. ապահովել ներկայացված հաշվետվությունների տվյալների իսկությունը և արժանահավատությունը, որի համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ինքն է կրում պատասխանատվություն,
- 2.2.17. նախքան դեղերի և բժշկական նշանակության ապրանքների գնման պլանները և հայտարարությունները հրապարակվելը Պատվիրատուի պահանջով դրանք տրամադրել Պատվիրատուին,
- 2.2.18. պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերությունների համար՝ ապահովել ընկերության տարեկան զարգացման ծրագրով սահմանված ցուցանիշների, այդ թվում՝ շահութաբերության ապահովման կատարումը,
- 2.2.19. պայմանագրի գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին անհապաղ գրավոր տեղեկացնել Պատվիրատուին,
- 2.2.20. Պատվիրատուի կողմից դիտարկում, մշտադիտարկում, ուսումնասիրություն, փորձագիտական գնահատում իրականացնելու ամբողջ ընթացքում ապահովել Պատվիրատուին անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի և այլ տեղեկատվության ներկայացումը, ապահովել համապատասխան մասնագետների համար աշխատանքային պայմաններ, օժանդակել աշխատանքները ժամանակին և լիարժեք կատարելու հարցում,
- 2.2.21. ապահովել սույն պայմանագրի գաղտնի հավելված 4-ով սահմանված դրույթների կատարումը, ինչպես նաև այդ դրույթների կատարման հիմքով իրեն հայտնի դարձած, օրենքով պաշտպանվող կամ այլ տեղեկությունների գաղտնիությունը,
- 2.2.22. Պատվիրատուի կողմից սահմանված ընթացակարգով ապահովել բուժաշխատողների մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների գնահատմանն ուղղված կազմակերպչական աշխատանքները, ինչպես նաև ընթացք տալ (իրագործել) գնահատման արդյունքների հիման վրա բուժաշխատողների մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների կատարելագործման և աշխատողների աշխատանքային գործունեության վերաբերյալ Պատվիրատուի ներկայացրած առաջարկություններին,
- 2.2.23. սույն պայմանագրի հավելված 2-ով նախատեսված՝ 200,0 մլն ՀՀ դրամը գերազանցող կազմակերպությունը մինչև օգոստոսի 31-ը ապահովում է անկախ աուդիտորի կողմից հաստատված նախորդ տարվա ֆինանսական հաշվետվություններ և աուդիտորական եզրակացություն: Ընդ որում, սույն պայմանագրի հավելված 2-ով նախատեսված 1000,0 մլն դրամը գերազանցող կազմակերպությունների կողմից ընտրված աուդիտ իրականացնող կազմակերպությունը պետք է բավարարի սույն պայմանագրի հավելված 6-ով նախատեսված պայմաններին,
- 2.2.24. Հայաստանի Հանրապետության 2004 թվականի մարտի 4-ի թիվ 318-Ն որոշմամբ սահմանված կարգով բնակչության սոցիալապես անապահով ու առանձին (հատուկ) խմբերի ցանկում չընդգրկված անձանց Բուժօգնության համար քվոտաների շրջանակներում տրամադրված ուղեգրերի վերաբերյալ հանձնաժողով ձևավորող բժշկական կազմակերպությունները Նախարարի կողմից սահմանված կարգով ներկայացնել հաշվետվություն ՀՀ առողջապահության նախարարություն,
- 2.2.25. Պատվիրատուի կողմից պահանջ ներկայացնելուց հետո 15-օրյա ժամկետում տրամադրել վերջին 2 տարիների ընթացքում պետական պատվերի պայմանագրի շրջանակներում իր կողմից դուրս գրած դեղատոմսերի պատճենները,
- 2.2.26. կատարել Բուժօգնության ոլորտը կարգավորող իրավական ակտերով սահմանված այլ պարտականություններ:

2.3. Պատվիրատուն իրավունք ունի.

- 2.3.1. սույն պայմանագրի համաձայն, իրականացնել դիտարկումներ, մշտադիտարկումներ, ուսումնասիրություններ, փորձագիտական գնահատում Կատարողի կողմից Բուժօգնության կատարման ընթացքի, Նախարարի կողմից հաստատված չափորոշիչներով և Պայմանագրով սահմանված ծավալների, որակի, Կատարողի գործունեությունը բնութագրող տեղեկատվության արժանահավատության և ստացված ֆինանսական միջոցների արդյունավետ ու նպատակային օգտագործման ճշտության և իրավական ակտերով սահմանված պահանջների կատարման և պահպանման վերաբերյալ, սահմանել հայտնաբերված թերությունները սեփական միջոցներով վերացնելու ողջամիտ ժամկետ,
- 2.3.2. հիվանդանոցային Բուժօգնության մասով իրականացնել Բուժօգնության ընթացիկ մշտադիտարկման աշխատանքներ՝ տվյալ բժշկական կազմակերպությանը կցագրված Պատվիրատուի ներկայացուցիչների միջոցով, որոնց իրավասությունների շրջանակը և կցագրումները ըստ բժշկական կազմակերպությունների հաստատվում են Նախարարի հրամանով,

- 2.3.3. պայմանագրով նախատեսված աշխատանքների ուսումնասիրության, դիտարկման, մշտադիտարկման, փորձագիտական գնահատման արդյունքներով հայտնաբերված թերությունները վկայակոչելու և դրանց հետ կապված պահանջներ ներկայացնելու՝ աշխատանքն ընդունելուց հետո մինչև երեք տարվա ընթացքում: Սույն կետը կիրառվում է նաև կողմերի միջև մինչև սույն պայմանագրի կնքումը ծագած հարաբերությունների նկատմամբ՝ կապված նախորդ երկու տարիների ընթացքում պետության կողմից երաշխավորված բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների ձեռքբերման հետ,
- 2.3.4. ամբողջությամբ կամ մասնակի չֆինանսավորել դեպքերի անհատական վարման (case management), մշտադիտարկման, դիտարկման կամ ուսումնասիրություն իրականացնելու ընթացքում հայտնաբերված՝
- 2.3.4.1. Բուժօգնության այն ծավալները, որոնք ըստ Կատարողի կողմից էլեկտրոնային առողջապահության համակարգի միջոցով ներկայացված հաշվետվությունների՝ պացիենտին մատուցվել են ամբողջությամբ կամ մասնակիորեն ոչ պատշաճ ծավալի և որակի,
- 2.3.4.2. պացիենտի ախտորոշմանը չհամապատասխանող լաբորատոր-գործիքային հետազոտություններով կամ բուժման պլանով կամ բժշկի կողմից նշանակված դեղերով բժշկական օգնության մատուցման դեպքերը,
- 2.3.4.3. ոլորտը կարգավորող իրավական ակտերի դրույթների չպահպանման դեպքերում,
- 2.3.5. առողջության առաջնային պահպանում իրականացնող կազմակերպություններում Նախարարի կողմից սահմանված Բուժօգնության որակի չափանիշները և ցուցանիշները չապահովելու դեպքում Կատարողի կողմից կատարված փաստացի աշխատանքների ծավալներում իրականացնել նվազեցումներ Նախարարի կողմից սահմանված կարգով,
- 2.3.6. Կատարողի կողմից սույն պայմանագրով սահմանված միևնույն դրույթը պայմանագրի գործողության ժամկետում կրկնակի խախտելու դեպքում՝
- 2.3.6.1. կիրառել սույն պայմանագրով նախատեսված տույժեր, տուգանքներ և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվության այլ միջոցներ,
- 2.3.6.2. միակողմանի լուծել պայմանագիրը՝ հաշվի առնելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 780-րդ հոդվածը,
- 2.3.7. այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև սույն պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով Պայմանագիրը լուծվել է:
- 2.3.8. միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողը էականորեն խախտել է սույն պայմանագրի դրույթները: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝
- 2.3.8.1. մատուցված ծառայությունները չեն համապատասխանում սույն պայմանագրով սահմանված պահանջներին,
- 2.3.8.2. խախտվել են ծառայությունների մատուցման ժամկետները,
- 2.3.9. պահանջել պայմանագրով նախատեսված տույժերի և տուգանքների վճարում,
- 2.3.10. պահանջել և 15-օրյա ժամկետում ստանալ Կատարողի կողմից վերջին 2 տարիների ընթացքում պայմանագրի շրջանակներում իր կողմից դուրս գրած դեղատոմսերի պատճենները,
- 2.3.11. կրել Բուժօգնության ոլորտը կարգավորող իրավական ակտերով սահմանված այլ իրավունքներ:

2.4. Պատվիրատուն պարտավոր է.

- 2.4.1. իրավական ակտերով սահմանված ժամկետներում ընդունել և ամփոփել Կատարողի կողմից իրականացված Բուժօգնության վերաբերյալ ներկայացված հաշվետվությունները և ներկայացնել վճարման,
- 2.4.2. սահմանված կարգով ապահովել ֆինանսավորման համար անհրաժեշտ փաստաթղթերի մուտքագրումը և այլ անհրաժեշտ գործողությունների կատարումը՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 15-ը, իսկ դեկտեմբեր ամսվա առաջին կեսի համար՝ մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը՝ Կատարողի կողմից սույն պայմանագրի 2.2.2. կետով սահմանված ժամկետների պահպանման պայմանով,
- 2.4.3. կատարողին ցուցաբերել անհրաժեշտ կազմակերպամեթոդական օժանդակություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) պաշտոնական կայք-էջում ստեղծել հատուկ դարան և տեղադրել պետության կողմից երաշխավորված բժշկական օգնության և սպասարկման

- 2.4.4. վճարումներ իրականացնելիս՝ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում ապահովել Կատարողի նկատմամբ տույժերի և տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը,
- 2.4.5. եթե պատվիրատուն պայմանագրով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված, և պայմանագրով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը պատվիրատուն պայմանագրի կողմին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը: Ընդ որում, պայմանագրի արդյունքը պատվիրատուին հանձնելու փաստն ամրագրվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը (էլեկտրոնային հասցեով հանձնելու դեպքում հիմք է ընդունվում ուղարկման ամսաթիվը),
- 2.4.6. Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից,
- 2.4.7. կատարել ոլորտը կարգավորող իրավական ակտերով սահմանված այլ պարտականություններ:

III. ՎԵՐԱՀՍԿՈՒՄ

- 3.1. Կատարողի կողմից սույն պայմանագրի շրջանակներում մատուցված կամ մատուցվող ծառայությունների որակի և ծավալի համապատասխանության գնահատումը սույն պայմանագրի պահանջներին իրականացվում է՝
- 3.1.1. ՀՀ օրենսդրությամբ և Նախարարի հրամանով հաստատված ընթացակարգով՝ մշտադիտարկումների, դիտարկումների, ուսումնասիրությունների, դեպքերի անհատական վարման (case management) միջոցով,
- 3.1.2. Կատարողի կողմից դեղերի և բժշկական նշանակության ապրանքների գնման նպատակով կնքված պայմանագրերի, ինչպես նաև գնման գործընթացների ընտրանքային մշտադիտարկում իրականացնելու միջոցով, այդ թվում՝ Կատարողից այդ գործարքներին առնչվող բոլոր փաստաթղթերը պահանջելով և ստանալով, ինչպես նաև մշտադիտարկման արդյունքներով բացահայտված խնդիրների շտկման նպատակով համապատասխան գործողություններ իրականացնելով՝ նախապես համաձայնեցնելով ՀՀ ֆինանսների նախարարության հետ (վերաբերվում է միայն 50% և ավելի պետական մասնակցությամբ առևտրային և պետական ոչ առևտրային կազմակերպություններին):

IV. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

- 4.1. Սույն պայմանագրով Կատարողի ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պայմանագրով սահմանվում են տույժեր և տուգանքներ: Տուգանքի չափը չի կարող պակաս լինել պայմանագրի գնի 0,5 տոկոսից, իսկ տույժերի չափը՝ 0,05 տոկոսից: Ընդ որում, տույժը հաշվարկվում է օրացուցային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ, իսկ տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:
- 4.2. Պարտավորությունների ոչ պատշաճ կատարում է համարվում նաև՝
- 4.2.1. եթե Կատարողի կողմից էլեկտրոնային առողջապահության համակարգ մուտքարված տվյալներում յուրաքանչյուր ծրագրի մասով հայտնաբերված թերությունների, անճշտությունների կամ ոչ արժանահավատ դեպքերի թիվը ամսական կտրվածքով կազմում է ներկայացված հաշվետվությունների 5 տոկոսը կամ ավելին,
- 4.2.2. Կատարողի կողմից սույն պայմանագրով նախատեսված Բուժօգնության ծավալները ոչ ամբողջությամբ կամ մասնակի կամ ոչ պատշաճ որակի Բուժօգնության տրամադրումը՝ Պատվիրատուի կողմից Կատարողին սույն պայմանագրի գործողության ընթացքում առնվազն մեկ անգամ գրավոր տեղեկացրել է նախազգուշացնելուց հետո նույն խախտումը կրկնվելու կամ այն չվերացնելու դեպքում,
- 4.3. սույն պայմանագրով հաշվետվությունների ներկայացման ժամկետները խախտելու դեպքում Կատարողից ուշացման յուրաքանչյուր օրվա համար գանձվում է տույժ՝ հաշվետու ժամանակահատվածում ներկայացման ենթակա կատարողականի արժեքի 0,05%-ի չափով,
- 4.4. Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 2.4.2. կետով նախատեսված ժամկետի խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով,
- 4.5. Կատարողը սահմանված կարգով և չափերով պատասխանատվություն է կրում նաև սույն պայմանագրի 3-րդ հավելվածում՝ «Ծառայությունների մատուցման պայմաններում» նշված պարտավորությունների չկատարման համար,

4.6. սույն պայմանագրի շրջանակներում մշտադիտարկումների, դիտարկումների, ուսումնասիրությունների, դեպքերի անհատական վարման միջոցով հայտնաբերված այն խախտումների գումարը, որոնք կատարվել են սույն պայմանագրի գործողության ժամանակահատվածում, Պատվիրատուն պակասեցնում է Կատարողի ընթացիկ տարվա փաստացի աշխատանքների ծավալից, իսկ սույն պայմանագրի գործողության ժամանակահատվածից դուրս հայտնաբերված խախտումների արձանագրված գումարը փոխանցվում է ՀՀ պետական բյուջեի համապատասխան հաշիվներին,

4.7. Պատվիրատուի կողմից հայտնաբերված խախտումների ճշտումը չի ազատում Կատարողին իր պարտավորությունները ոչ պատշաճ կատարելու համար ՀՀ օրենսդրությամբ և սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվությունից,

4.8. տուգանքի և տույժի վճարումը Պատվիրատուին և Կատարողին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները ամբողջությամբ կատարելու կամ խախտումները վերացնելու պարտականությունից,

4.9. սույն պայմանագրի շրջանակում նախատեսված տուգանքները և տույժերը հաշվարկվում և վճարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4.10. սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում Պատվիրատուին և Կատարողին իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

V. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

5.1. Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե եղել է անհաղթահարելի ուժի ազդեցություն, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

VI. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

6.1. Սույն պայմանագիրը կարող է լուծվել, եթե կողմերը կամ լուծարվել, կամ վերակազմակերպվել, կամ սնանկ են ճանաչվել՝ հատուցելով կողմերի կատարած ծախսերը,

6.2. Սույն պայմանագիրը կարող է լուծվել 2.3.8. և 5.1 կետերով նախատեսված դեպքերում,

6.3. Սույն պայմանագիրը կարող է միակողմանի լուծվել՝ 7.2 կետում նշված համաձայնագրի կնքումից Կատարողի հրաժարման դեպքում,

6.4. ՀՀ օրենսդրությամբ կամ սույն պայմանագրով նախատեսված այլ դեպքերում:

VII. ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

7.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև 31.12.2018 թվականը: Պայմանագրի պայմանները կիրառվում են 2017թ. դեկտեմբերի 15-ից մինչև պայմանագիր կնքելը, բայց ոչ ուշ, քան 2018թ. հունվարի 31-ը կողմերի միջև ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում մինչև պայմանագիր կնքվելը Կատարողի կողմից մատուցված ծառայության դիմաց վճարումը իրականացվում է Պայմանագիրը սույն կետի համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում:

7.2. Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ (պետական պատվերի շրջանակներում իրականացվող բժշկական օգնության տեսակների նորմատիվներում և գներում, Կատարողի պայմանագրային գումարներում Նախարարի համապատասխան հրամաններով իրականացվող փոփոխությունները և լրացումները) կարող են կատարվել համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

7.3. Սույն պայմանագրի փոփոխման կամ լուծման դեպքում տվյալ պահին բուժումը դեռ չավարտած պացիենտների բուժման հետագա փոխհատուցումը իրականացնելու նպատակով, Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում պակասեցման ենթակա ծառայության մասով բուժումը շարունակող պացիենտների ցանկը և հիվանդության պատմագրերի համարները:

7.4. Կողմերի միջև վեճերը լուծվում են Կողմերի բանակցությունների միջոցով, իսկ համաձայնության չգալու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.5. Սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում, արգելվում է կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայությունների ծավալների կամ, ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

7.6. Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.7. Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը: Ընդ որում, արգելվում է միևնույն բյուջետային տարվա ընթացքում նույն ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ձեռքբերման նպատակով նախատեսել ֆինանսական միջոցներ:

7.8. Սույն պայմանագրից ծագած Կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդեմ պարտավորության հաշվանցով, առանց Կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի առանց պարտապան Կողմի (<< ֆինանսների նախարարության) գրավոր համաձայնության:

7.8.1. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ առաջացնող գնումների դեպքում պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է այդ գործարքի՝ լիազորված մարմնի կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.9. Սույն պայմանագիրը և նրան կից հավելվածները կազմված են հավասար իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից, որոնցից մեկը գտնվում է Պատվիրատուի, մյուսը՝ Կատարողի մոտ՝ բացառությամբ գաղտնի հավելված 4-ի:

VIII. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
<< ԱՆ աշխատակազմ

ԿԱՏԱՐՈՂ
Ծաղկահովիտի առողջության կենտրոն ՓԲԸ

Հասցե Երևան, Կառավարական տուն 3

Սպասարկող Բանկ << ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

Բանկային հաշիվ հ/ՀՀՀ 900011105013

02507171

Հասցե գ.Ծաղկահովիտ Հոկտեմբերյան 16

Սպասարկող Բանկ ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ ՓԲԸ

Բանկային հաշիվ հ/ՀՀՀ 220425140013000

05204555

ԱՆ աշխատակազմի ղեկավար՝
Նելսոն Զուլոյան

Տնօրեն
Ժ/յ Արմեն Հակոբյան



/ստորագրություն/

 Feb 8 2018 3:49 PM

/ստորագրություն/
« 19 » հունվարի 2018 թ

« 19 » հունվարի 2018 թ

Հեռ: +37460808003
Ֆաքս:

Հեռ: +37493233603
Ֆաքս:
E-mail: armenhakobyan5.5@mail.ru

ՑԱՆԿ

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՐՄԻՑ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԱՆՎՃԱՐ ԵՎ ԱՐՏՈՆՅԱԼ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ և ՄՊԱՍԱՐԿՄԱՆ ԸՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԹՈՒՅԼԱՏՐՈՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԳՆԵՐԻ

ԱՐՎԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
 ԾԱՂԿԱՆՈՎԻՏԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ
 (տարածաշրջանի և բժշկական կազմակերպության անվանումը)

Ծառայության կոդը	Բժշկական օգնության և սպասարկման տեսակը և ծառայությունը	Չափման միավորը	Միավորի գինը (դրամ)	Միավորի օրական գինը (դրամ)
1.2	Բժշկական ընդհանուր պրակտիկա			80750
0701100	ԱՄՊ բուժքույրերի կողմից ԲՄԿ-ներում (յուրաքանչյուր բուժքրոջ հաշվով)	Դեպք		
0709000	Անվճար և արտոնյալ պայմ. դեղորայքի տրամադրում (փաստացի ծախս)	Դեպք	1	10.432
0711003	Մեծահասակների առողջության առաջնային պահպանում պրոֆիլիքսիկաներում (լեռնային և բարձր լեռնային պայմաններում (ԱՄՊ+տեղ+լար)	Դեպք		0.2274
0711022	Հոգեկենսաբանական դիսպանսեր բուժօգնություն պրոֆիլիքսիկաներում	Դեպք		0.1781
0711023	Ուռուցքաբանական դիսպանսեր բուժօգնություն ՀՀ մարզերի պրոֆիլիքսիկաներում	Դեպք		0.3287
0711024	Հակատերերկրաբանական դիսպանսեր բուժօգնություն ՀՀ մարզերի պրոֆիլիքսիկաներում	Դեպք		0.2274
0711025	Մարչկալիքներաբանական դիսպանսեր բուժօգնություն ՀՀ մարզերի պրոֆիլիքսիկաներում	Դեպք		0.0904
0711128	Հակատերերկրաբանական դիսպանսեր ծառայության լաբորատոր-գործիքային հետազոտությունների համար (ներառյալ կցագրված տարածքի բնակչության բնակչության համար իրականացվող)/ՀՀ մարզեր	Դեպք		0.2301
1.3	Մանկաբուժական ընդհանուր պրակտիկա			18.301
0711005	Երեխաների առողջության առաջնային պահպանում պրոֆիլիքսիկաներում (լեռնային և բարձր լեռնային պայմաններում (ԱՄՊ+տեղ+լար)	Դեպք		121.5
0711016	Երեխաների բժշկական օգնություն և սպասարկում դպրոցներում	Դեպք	1	
0711035	Անվճար և արտոնյալ պայմաններով դեղորայքի տրամադրում (մանկ.)	Դեպք		
1.4	Մանկաբարձագինեկոլոգիական ընդհանուր պրակտիկա			2.0192
0711030	Մանկաբարձ-գինեկոլոգի կողմից իրականացվող մանկաբարձագինեկոլոգիական բուժօգնություն	Դեպք		1.0096
0711031	Մանկաբարձ-գինեկոլոգի կողմից իրականացվող մանկաբարձագինեկոլոգիական բուժօգնություն ընտանեկան բժշկների սպասարկման տարածքի կանանց համար	Դեպք		2870
0711036	Մանկաբարձ-գինեկոլոգի կողմից իրականացվող հղիների հսկողություն	Դեպք		1435
0711037	Մանկաբարձ-գինեկոլոգի կողմից իրականացվող հղիների հսկողություն ընտանեկան բժշկի ուղեգրման դեպքում	Դեպք	900	
0757010	Արյան խմբի որոշում (մանկաբարձական և գինեկոլոգիական)	Դեպք	900	
0757020	Դեզոս գործոնի որոշում(մանկաբարձական և գինեկոլոգիական)	Դեպք	1250	
0757025	ՄԻՎՎ Ի (ԹԼՃ) հետազոտություն	Դեպք	200	
0757026	ՄԻՎՎ Ի հետ համար արյան հավաքագրում և տեղափոխում(մանկաբարձական և գինեկոլոգիական)	Դեպք	1400	
0757030	Հեպատիտ B, Հեպատիտ C (յուրաքանչյուր մեկ հետազոտություն)	Դեպք	1650	
0757040	Ինտեգրալ ՄԻՎՎ(մանկաբարձական և գինեկոլոգիական)	Դեպք	1100	
0757050	Ինտեգրալ ՎԴՐԼ(մանկաբարձական և գինեկոլոգիական)	Դեպք	900	
0757060	Ինտեգրալ ՄՐՔ(մանկաբարձական և գինեկոլոգիական)	Դեպք	900	
0757070	Վասերմանի ռեակցիա (RW)(մանկաբարձական և գինեկոլոգիական)	Դեպք	1400	
0757080	Սնկերի և գոնոկոկերի բակտերիոլոգիական քննություն(մանկաբարձական և գինեկոլոգիական)	Դեպք	1250	
0757090	Պարազիտար հիվանդությունների բակտերիոլոգիական քննություն արյան մեջ	Դեպք	2500	
0757100	Ինտեգրալ ՄԻՎՎ մեկ նկար /ժապավեն 30X40/(մանկաբարձական և գինեկոլոգիական)	Դեպք	2200	
0757101	Ինտեգրալ ՄԻՎՎ մեկ նկար /ժապավեն 24x30/(մանկաբարձական և գինեկոլոգիական)	Դեպք	2100	
0757102	Ինտեգրալ ՄԻՎՎ մեկ նկար /ժապավեն 18x24/(մանկաբարձական և գինեկոլոգիական)	Դեպք	1950	
0757103	Ինտեգրալ ՄԻՎՎ մեկ նկար /ժապավեն 13x18/(մանկաբարձական և գինեկոլոգիական)	Դեպք	1650	
0757120	Ֆլորոբիոլոգիա (մեկ անձ)(մանկաբարձական և գինեկոլոգիական)	Դեպք	1000	
0757130	Ֆիզիոթերապիա (մեկ սեսիոն) 1 անձի համար ոչ ավել քան 10000 դրամ(մանկաբարձական և գինեկոլոգիական)	Դեպք	1300	
0757140	Բակտերիոլոգիական հետազոտություն(մանկաբարձական և գինեկոլոգիական)	Դեպք	1400	
0757141	Խորիքի բակտերիոլոգիական հետազոտություն	Դեպք	1650	
0757142	Խորիքի բակտերիոլոգ. հետազոտ. դեղորայքային զգայունության որոշումով(մանկաբարձական և գինեկոլոգիական)	Դեպք	250	
0757143	Մանուկի փորձ. Տուբերկուլինոդիագնոստիկա	Դեպք	420	
0757151	Խորիքի բակտերիոլոգիական հետազոտություն	Դեպք	420	
0757152	Բակտերիոլոգիական հետազոտություն	Դեպք	900	
0757160	Բիոքիմիական հետազոտություն՝ 1 անձին անվազն 3 բաղադրիչի որոշումով	Դեպք	330	
0757161	Արյան մեջ գլյուկոզայի որոշում	Դեպք	330	
0757162	Արյան մեջ խոլեստերինի որոշում	Դեպք	420	
0757163	Բիոքիմիական հետազոտ՝ 1 անձին մինչև 3 բաղադրիչի որոշման դեպքում յուրաքանչյուր բաղադրիչը	Դեպք	1180	
0757170	Ֆունկցիոնալ հետազոտություններ (ֆունկցիոնալ թեստեր, սպիրոգրաֆիա և այլն)	Դեպք	1180	
0757171	ԷԿԳ	Դեպք	900	
0757180	Ցիտոլոգիական հետազոտություն	Դեպք	900	
0757200	Ընդհանուր (կամ կիրիլիկական) հետազոտություններ՝ 1 անձին անվազն 3 բաղադրիչի որոշումով	Դեպք	900	
0757202	Արյան ընդհանուր քննություն (եյկոֆորմուլայով)	Դեպք	420	
0757203	Արյան ընդհանուր՝ առանց (եյկոֆորմուլայի)՝ 1 անձին անվազն 3 բաղադրիչի որոշումով	Դեպք	420	
0757204	Մեզի ընդհանուր քննություն	Դեպք	420	
0757205	Ընդհանուր (կամ կիրիլիկական) հետազոտություններ՝ 1 անձին մինչև 3 բաղադրիչի որոշման դեպքում յուրաքանչյուր բաղադրիչը	Դեպք	140	
0757206	Արյան ընդհանուր՝ առանց (եյկոֆորմուլայի)՝ 1 անձին մինչև 3 բաղադրիչի որոշումով	Դեպք	660	
0757207	Արյան (առանց (եյկոֆորմուլայի) և մեզի ընդհանուր քննություն սկրինինգ շրջանակներում ընդգրկված հղիներին	Դեպք	2800	
0757219	Սոնոգրաֆիկ հետազոտություն (մեկ դեպքի արժեքը՝ անկախ տեղակայումների քանակից)	Դեպք	1500	
0757220	Պտղի սոնոգրաֆիա			
2.1	Ներքին բժշկական (ընդհանուր թերապիական)			107900
0201000	Ընդհանուր թերապիական	Դեպք		43160
0201001	Ընդհանուր թերապիական ցերեկային ստացիոնարում	Դեպք		107900
0201002	Սրտամկանի սուր ինֆարկտ՝ ներառյալ ինտենսիվ թերապիա /առանց վերականգնման ծառայությունների/	Դեպք		107900
0201003	Ինսուլի՝ ներառյալ ինտենսիվ թերապիա /առանց վերականգնման ծառայությունների/	Դեպք		107900

0201004	Հիպերտոնիկ կրիզ /մեծ/	Դեպք	23500	
2.2 Մանկաբուժական				
0501000	Ընդհանուր մանկաբուժական	Դեպք	153400	22000
0501001	Ընդհանուր մանկաբուժական ցերեկային ստացիոնարում	Դեպք	61360	8800
0501002	Հիպերտոնիկ կրիզ/երեխա/	Դեպք	39000	
0501010	Տոնցիլիտներ, վերին շնչառական ուղիների բորբոքային հիվանդություններ (ռեինտներ, սինուսիտներ, ֆարինգիտներ, լարինգիտներ, տրախեիտներ) (մանկաբուժական)	Դեպք	112500	16100
0501011	Բրոնխիտներ, թոքաբորբեր (երեխա)	Դեպք	127900	18200
2.3 Մանկաբարձական				
0104000	Նորնալ և թեթև շեղումներով ծննդաբերություն	Դեպք	109400	
0204003	Հղիության ախտաբանություն /ընդ/	Դեպք	117300	13000
0204005	Բարդացած ծննդաբերություն՝ I աստիճանի բարդությամբ	Դեպք	117600	
0204006	Ծննդալուծում կեսառյան հատումով՝ I աստիճանի բարդությամբ	Դեպք	198500	
0204007	Բարդացած ծննդաբերություն՝ II աստիճանի բարդությամբ	Դեպք	133000	
0204103	Հղիության ախտաբանություն ցեր. ստացիոնարում /ընդ./	Դեպք	46920	5200
0205005	Արգանդի խոռոչի քերում հիվանդանոցային պայմաններում /մեծ/մանկաբարձ./	Դեպք	23500	
0301292	Փոքր կեսառյան հատում	Դեպք	107900	
0301293	Ծննդաբերություն տան պայմաններում	Դեպք	40000	
2.5 Ընդհանուր վիրաբուժական				
0201005	Սուր միզակապություն /մեծ/	Դեպք	23500	
0201006	Երիկամային խիթ /մեծ/	Դեպք	23500	
0202000	Ընդհանուր վիրաբուժական /մեծ./	Դեպք	107900	
0202010	Փոքր վիրահատական միջամտություններ /մեծ/	Դեպք	23500	
0709002	Բուժօգնություն միջոցներով գնված հակաթույն դեղորայքի փաստացի ծախս	Դեպք	120000	
1700000	Կերքի առաջնային վիրաբուժական մշակում և կարում	Դեպք	12000	
1700001	Պարոնիխիաներ, ներածած եղունգ, եղունգի հեռացում	Դեպք	12000	
1700002	Ֆիզգոմեայի, թարախակուլոլի (արսցես) բացում	Դեպք	12000	
1700003	Կենդանիների կողմից հասցված վնասվածքների առաջնային վիրաբուժական մշակում (ՀՓ կամ ՀԿ շիճուկների ներարկմամբ)	Դեպք	4000	
1700004	Փոքր վերքերի վիրակապություններ առանց կարերի	Դեպք	17000	
1700005	Ուղեղեղային պոսևկցիա	Դեպք	450000	
1700006	Լոբեկտոմիա	Դեպք	125000	
1700007	Կրծքային փոքր վիրահատություններ կրծքավանդակի պատի ուռուցքների հեռացում առանց ընդհանուր անզգայացման	Դեպք	70000	
1700008	Պլերալ խոռոչի դրենավորում	Դեպք	25000	
1700009	Պլերալ պոսևկցիա	Դեպք	240000	
1700010	Վենեկտոմիա, թրոմբեկտոմիա (թրոմբեմբոլիտիկտոմիա)	Դեպք	300000	
1700011	Վիրահատություններ պերեֆերիկ զարկերակների վրա, էնդարտերեկտոմիա	Դեպք	145000	
1700012	Փոքր անոթային վիրահատություններ	Դեպք	170000	
1700014	Ապենդեկտոմիա	Դեպք	220000	
1700015	Ապենդեկտոմիա լավարասկոպիկ	Դեպք	220000	
1700017	Լեղապարկի հեռացում լավարասկոպիկ	Դեպք	238000	
1700018	Լյարդի էխինոկոկի հեռացում	Դեպք	250000	
1700019	Լյարդի էխինոկոկի հեռացում լավարասկոպիկ	Դեպք	200000	
1700020	Ճողվածքահատում միակողմանի (առանց ցանցի պրոֆեքի)	Դեպք	240000	
1700021	Ճողվածքահատում լավարասկոպիկ միակողմանի (առանց ցանցի պրոֆեքի)	Դեպք	300000	
1700023	Փայծախի հեռացում	Դեպք	382000	
1700024	Վիրահատություններ խոլեդոխի վրա	Դեպք	470000	
1700025	Գաստրեկտոմիա	Դեպք	300000	
1700026	Շետորվայնանձային ոչ օրգանային ուռուցքների հեռացում	Դեպք	210000	
1700027	Մեծ ճարպոլի հեռացում	Դեպք	76000	
1700028	Փոքրածավալ ուռուցքների հեռացում (տեղային անզգայացմամբ)	Դեպք	120000	
1700029	Փոքրածավալ ուռուցքների հեռացում (ընդհանուր անզգայացմամբ)	Դեպք	300000	
1700030	Վիրահատություններ խոցային հիվանդության կապակցությամբ	Դեպք	300000	
1700031	Վիրահատություններ անացանեխիության դեպքում	Դեպք	153000	
1700032	Ախտորոշիչ լավարոտոմիա	Դեպք	102000	
1700033	Կարճ սանձիկ (հատում)	Դեպք	102000	
1700034	Սպիական ֆիմոզ (թլապատում)	Դեպք	102000	
1700035	Մետատեսենոզ (մետատոմիա)	Դեպք	178500	
1700036	Թիլախի պլաստիկ ֆիմոզի կապակցությամբ	Դեպք	178500	
1700037	Հիպոսպադիա դիստալ ըն MAGPI եղանակով	Դեպք	170000	
1700038	Ամորձու թաղանթների ջրզողության վիրահատություն	Դեպք	170000	
1700039	Սերմնալարի կիստայի հեռացում	Դեպք	170000	
1700040	Օրիսեկտոմիա	Դեպք	170000	
1700041	Օրիսեկտոմիա երկկողմանի	Դեպք	195500	
1700042	Լեռքին աճուկային օղից վար կրիպտորիսիզմի վիրահատություն	Դեպք	170000	
1700043	Սերմնալարի երակների լայնացում՝ բարձր հատում	Դեպք	170000	
1700044	Ամորձու սուր հիվանդություններ, ամորձու ոլորում, ամորձու պատվածք, կախոցի ոլորում, սուր օրիտիպոլիդիմիտ և այլ	Դեպք	195000	
1700045	Առնակալի անպրոտացիա	Դեպք	59000	
1700047	Միզածորանի ստենոսավորում	Դեպք	35000	
1700048	Ուրեթրոցիստոսկոպիա ախտորոշիչ նպատակով	Դեպք	59000	
1700049	Պերիուրան ցիստոտոմիա	Դեպք	119000	
1700051	Պարապրոկտիտի, պրոկտի էպիթելիային խոլոլակի կտրվածք	Դեպք	119000	
1700052	Անալ ստրիկտուրայի վերացում	Դեպք	160000	
1700053	Թուրքահատում և/կամ ճարձի հեռացում	Դեպք	160000	
1700054	Պարապրոկտիտի բացազատում աղիքի լուսանցքում	Դեպք	160000	
1700055	Ախտահարված հյուսվածքների հեռացում	Դեպք	153000	
1700056	Ուղիղ աղիքի օտար մարմնի տրանսանալ հեռացում	Դեպք	153000	
1700057	Պերիանալ կանոխիումների հեռացում	Դեպք	160000	
1700058	Պրոկտի էպիթելիային խոլոլակի հեռացում	Դեպք	204000	
1700059	Միջին տարածվածության ախտահարված հյուսվածքների հեռացում	Դեպք	160000	
1700060	Պրոկտեկտոմիա կոլոստոմիայի միջոցով	Դեպք	204000	
1700061	Ռեկտոցեկի վերացում	Դեպք	255000	
1700062	Իլեո կոլոստոմիայի ձևավորում	Դեպք	255000	
1700063	Աղիների շրջանցող բերանակցում	Դեպք	255000	
1700064	Կոլոտոմիա	Դեպք	255000	
1700065	Անալրոք պարապրոկտիտի բացազատում	Դեպք	255000	
1700066	Տարածված ախտահարված հյուսվածքների հեռացում	Դեպք	255000	
1700067	Խթաղու մասնահատում ստոմայով	Դեպք	306000	

1700068	Շրջանաձև կարող սարքի օգտագործմամբ հաստ աղու վերականգնողական վիրահատություններ Կարոտանի տիպի և Սիկուլիչի վիրահատություններից հետո	Դեպք	340000	
1700069	Խթաբու մասնահատում քերանկցմամբ	Դեպք	340000	
1700071	Պոլիպեկտոմիա ռեկտոսկոպի միջոցով	Դեպք	30000	
1700072	Փոքր մետաղական կոնստրուկցիայի հեռացում (բացառությամբ արտաօջախային կոնստրուկցիաների)	Դեպք	100000	
1700073	Մեծ մետաղական կոնստրուկցիայի հեռացում	Դեպք	153000	
1700074	Անրակոսկրի, թիակոսկրի, ձևկոսկրի, նրբուղի պարզ չբարդացած կոտրվածքների վիրահատություններ	Դեպք	180000	
1700075	Ճանձակոսկրի, ծիկոսկրի, ոլոքի միջային պնեղի պարզ չբարդացած կոտրվածքների վիրահատություններ	Դեպք	240000	
1700076	Անրակոսկրի, թիակոսկրի, ձևկոսկրի, նրբուղի, ճանձակոսկրի, ծիկոսկրի, ոլոքի միջային պնեղի բարդ (բաց, բեկորավոր, ներհողային հասանցված հողախախտով, փափուկ հյուսվածքների վնասումով և այլն) կոտրվածքների վիրահատություններ	Դեպք	240000	
1700077	Բազկոսկրի, նախաբազկի ոսկրերի, ոլոքի պարզ չբարդացած կոտրվածքների վիրահատություններ	Դեպք	260000	
1700078	Բազկոսկրի, նախաբազկի ոսկրերի, ոլոքի բարդ (բաց, բեկորավոր, ներհողային հասանցված հողախախտով, փափուկ հյուսվածքների վնասումով և այլն) կոտրվածքներ	Դեպք	300000	
1700079	Ազդրոսկրի և կոնքի ոսկրերի պարզ չբարդացած կոտրվածքների վիրահատություններ	Դեպք	420000	
1700080	Ազդրոսկրի և կոնքի ոսկրերի բարդ (բաց, բեկորավոր, ներհողային հասանցված հողախախտով, փափուկ հյուսվածքների վնասումով և այլն) կոտրվածքների վիրահատություններ	Դեպք	500000	
1700081	Պոլիտրավմա, հասանցված վիրահատություններ	Դեպք	420000	
1700082	Շյուրեր և պտուտակներ մեկ հատվածի համար (մեկ միավորով)	Դեպք	21000	
1700083	Փոքր մետաղական կոնստրուկցիաներ՝ պնեղի հարթակ, անրակի հարթակ (յուրաքանչյուրի համար)	Դեպք	170000	
1700084	Միջին մետաղական կոնստրուկցիաներ՝ մեծ ոլոքի հարթակ, բազկոսկրի ոսկրերի հարթակ (յուրաքանչյուրի համար)	Դեպք	220000	
1700085	Մեծ մետաղական կոնստրուկցիաներ՝ ազդրի հարթակ, բազկի մեխ, սրունքի մեխ, ազդրի մեխ (յուրաքանչյուրի համար)	Դեպք	270000	
1700086	Կատանակի և ուռնաթաթի փոքր հողերի հողախախտների կոնսերվատիվ բուժում հարդրողական կամ ընդհանուր անզգայացմամբ (աքրուպտոր պայաններում)	Դեպք	40000	
1700087	Ենթադրականախտ (ամբուլատոր պայաններում)	Դեպք	12000	
1700088	Կոտրվածքների գիպսային անշարժացում (վերին վերջույթ)	Դեպք	17000	
1700089	Չեռնաթաթի մատների գիպսային անշարժացում	Դեպք	8000	
1700090	Ուռնաթաթի մատների գիպսային անշարժացում	Դեպք	12000	
1700091	Կոտրվածքների գիպսային անշարժացում (ստորին վերջույթ)	Դեպք	21000	
1700092	Ֆիբրեկլասային անշարժացում՝ առանց ֆիբրեկլասի արժեքի	Դեպք	12000	
1700093	Փափուկ հյուսվածքների սալաբլոկների, մկանների կամ ջլերի գերձգման կապակցությամբ կատարվող գիպսային անշարժացում	Դեպք	20000	
1700094	Փափուկ հյուսվածքներից օտար մարմնի հեռացում	Դեպք	12000	
1700095	Բուժական ներհողային պոնկցիա	Դեպք	10000	
1700097	Ստրումեկտոմիա միջին ծավալ	Դեպք	225000	
1700098	Ստրումեկտոմիա մեծ ծավալ	Դեպք	300000	
1700099	Ստրումեկտոմիա առջիկալ լիմֆոդիսեկցիայով մեծ ծավալ	Դեպք	400000	
1700100	Երկրորդ անգամ ԳՆԱՅՆՆԱԿԱՆ ԳՆԱՅՆՆԵՐԻ ԲՈՒԺՈՒՄ ԻՄԵՆ 20 ՕՐ ՍՏՈՂՈՂՈՅԱՆՆԵՐ ԵՆԴՈՂԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՆԶԳԱՅԱԿԱՆ ԿԱՏԱՐՎՈՂ ԵՆԴՈՂԿՈՄԻՏՆԵՐ (1 մ/օրվա գիւր)	Դեպք	30000	30000
1700101	Երկրորդ անգամ ԳՆԱՅՆՆԱԿԱՆ ԳՆԱՅՆՆԵՐԻ ԲՈՒԺՈՒՄ 21 ՕՐ և ավել տևողությամբ ԵՆԴՈՂԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՆԶԳԱՅԱԿԱՆ ԿԱՏԱՐՎՈՂ ԵՆԴՈՂԿՈՄԻՏՆԵՐ (ընդհանուր գիւր)	Դեպք	600000	
1700102	Ավանազնի բարդ և բարդացած (կոմբինացված, հասանցված) վերքերի վիրաբուժական մշակում (բացառապես վնասվածքների ժամանակ)	Դեպք	65000	
2.5.1 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ (<< մարզեր)				
0202020	Ոսկրերի կոտրվածքների ոչ վիրահատական բուժում մինչև 15 օր տևողությամբ /ընդհանուր, մեծ/	Դեպք	64400	4300
0202021	Ոսկրերի կոտրվածքների ոչ վիրահատական բուժում 15 օրից ավել տևողությամբ /ընդհանուր, մեծ/	Դեպք	107900	5400
0202022	Ոսկրերի կոտրվածքների վիրահատական բուժում /ընդհանուր, մեծ/	Դեպք	107900	
0202023	Ոսկրերի կոտրվածքներ, հողախախտներ, գիպսի տեղադրում /ոչ վիր./ընդհանուր, մեծ/	Դեպք	12000	
0301146	Օտոլարինգոլոգիական (մեծ) (<< մարզեր)	Դեպք	80600	
0301147	Օտոլարինգոլոգիական ցեղ. ստաց./մեծ./ (<< մարզեր)	Դեպք	32240	
0301148	Տոնզիլեկտոմիա, ադենոիդեկտոմիա ընդհանուր անզգայացումով /մեծ/ (<< մարզեր)	Դեպք	60000	
0301149	Տոնզիլեկտոմիա, ադենոիդեկտոմիա տեղային անզգայացումով /մեծ/ (<< մարզեր)	Դեպք	26600	
0501005	Սուր միզակապություն (<< մարզեր)	Դեպք	39000	
0501006	Երիկամային խիթ (<< մարզեր)/երեխա/	Դեպք	39000	
0502000	Ընդհանուր վիրաբուժական (երեխա)/(<< մարզեր)	Դեպք	179000	
0502012	Փոքր վիրահատական միջամտություն (<< մարզեր) /երեխա/	Դեպք	39000	
0502013	Ընդհանուր վիրաբուժական (ընդհանուր պրոֆիլի բաժանմունքներում) (<< մարզեր)/երեխա/	Դեպք	179000	
0502014	Ոչ վիրահատական բուժում ընդհանուր վիրաբուժական բաժանմունքում (<< մարզեր) (երեխա)	Դեպք	153400	22000
0502023	Խոշոր հողերի հետադրամատիկ հողախախտների փակ ուղղում ընդհանուր անզգայացմամբ (երեխա)	Դեպք	107900	
0502024	Խոշոր հողերի հետադրամատիկ հողախախտների և ուղեկցող կոտրվածքների վիրահատական բուժում (երեխա)	Դեպք	204600	
0502025	Խոշոր ոսկրերի փակ կոտրվածքների բուժում ձգման եղանակով, գիպսային անշարժացումով ընդհանուր անզգայացմամբ և ռենտգեն հսկողության ներքո (երեխա)	Դեպք	153400	
0502026	Խոշոր ոսկրերի (իլյացիա եւս անրակի և ձևկոսկրի) փակ կոտրվածքների վիրահատական բուժում բաց եղանակով, գիպսային անշարժացումով ընդհանուր անզգայացմամբ և ռենտգեն հսկողության ներքո (երեխա)	Դեպք	153400	
0502027	Խոշոր ոսկրերի փակ կոտրվածքների վիրահատական բուժում՝ ընդհանուր անզգայացմամբ և ռենտգեն հսկողության ներքո (չյուրերով, ապարատներով և մեխերով) (երեխա)	Դեպք	153400	
0502028	Խոշոր ոսկրերի բաց, բազմաբեկոր, բազմաթիվ (2 և ավելի) կոտրվածքների վիրահատական բուժում (երեխա)	Դեպք	204600	
0502029	Ողնաշարի և խոշոր ոսկրերի փակ կոտրվածքների ոչ վիրահատական բուժում (երեխա)	Դեպք	107900	
0502030	Կոնքի և ողնաշարի կոտրվածքների վիրահատական բուժում (երեխա)	Դեպք	204600	
0502040	Ոսկրերի կոտրվ. հողախախտներ,գիպսի տեղադր. /ոչ վիր. եղանակով/ընդհ/	Դեպք	12100	
